№ 49 Մարտի 18 (30) 1881 Մարտի 18 (30) № 49

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի տենդային դրութիւնը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Իտալիա։ Թուրքիա։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դափթ բէկ։

ԹԻՖԼԻՍԻ ՏԵՆԴԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս շատ անգամ ասել ենք, Թիֆլիսցիներին միայն այն հարցերն են հետաքրքրում, որոնց մէջ անձնական շահ, նիւթական օգուտ կայ։ Թիֆլիսցին, որին ոչինչ բարոյական կամ մտաւոր խնդիր չէ հետաքրքրում, մեծ յուզմունքի մէջ, կատարեալ տենդային դրութեան մէջ է լինում, երբ, օրինակ, բացվում է մի չաղ տեղ, մի պաշտօն լաւ ռոճիկով։ Այդ լինում է քաղաքագլխի, ուպրավայի անդամների, կամ բանկերի դիրեկտորների ընտրութիւնների ժամանակ....

Այս րոպէիս, օրինակ, Թիֆլիսի ամբողջ ինտելիգէնցիան յուզված է, սարսափելի տենդային դրութեան մէջ է, որովհետև շուտով լինելու են մեր քաղաքի «փոխադարձ կրեդիտի» բանկի դիրէկտորի ընտրութիւնները։ Այն մի ցիլինդրաւոր,—ինչ մտմտագիտութեան և պատկանէր նա, դա մի և նոյն է,—աշխատում է իրան ընտրել տալ այդ պաշտօնի վրա, իւրաքանչիւրը իր ծանօթներին և ազգականներին է դիմում և նրանց միջոցով իր համար ագիտացիա անում, որպէս զի ընտրվի այդ պաշտօնի վրա։ Եւ ահա քանի մի օր է խօսակցութիւնը Թիֆլիսում միայն դրա վրա է, թէ ո՞վ կը լինի այն բաղդաւորը, որ կը ստանայ 3000 ռուբլիանոց չաղ տեղը՝ Կիրակոսեանը, Մարտիրոսեանը, թէ Պետրոսեանը....

Եւ նշանաւորն այն է, որ կանդիդատների վրա խօսելով, հասարակութիւնը ի նկատի չէ առնում սրա կամ նրա այս և այն արժանաւորութիւնը յիշեալ պաշտօնը վարելու համար, այլ խօսում է միմիայն այն բանի վրա, թէ կանդիդատներից ո՞րին աւելի նպաստում են հանգամանքները, ո՞վ աւելի աջողութիւն և հաւանականութիւն կունենայ ընտրվել բանկի դիրեկտոր...

Խօսելու ժամանակ չեն ասում՝ «Կիրակոսեանը աւելի յարմարութիւն ունի ընտրվել բանկի դիրեկտոր, որովհետև ուսումնասիրել է ֆինանսական գիտութիւնը, կամ ազնիւ մարդ է»,—ոչ, Թիֆլիսցիների դատողութիւնը բոլորովին այլ է։ «Կիրակոսեանը աւելի հաւանականութիւն ունի ընտրվել, քան թէ Մարտիրոսեանը, ասում է Թիֆլիսցին խորհրդաւոր կերպով, որովհետև առաջինը դիմել է արդէն այս ինչ հաստատութիւնին և սա խոստացել է նրան իր հովանաւորութիւնը բանկի ընդհանուր ժողովի քուէարկութեան ժամանակ։»

Ահա Թիֆլիսցու դատողութեան ձևը, ահա այն այրվող, օրական, կենսական հարցերը, ահա այն մտաւոր և բարոյական ձգտումները, որոնք զբաղեցնում են Թիֆլիսցուն, այդ անշունչ էակին շունչ և կենդանութիւն են տալիս։

Թիֆլիսցին զարթնում է իր մշտական անտարբերութենից, իր խոր քնից, նրա կիրքը շարժվում է, նա յուզված, գրգռված, տենդային դրութեան մէջ է լինում ոչ թէ երբ որ հասարակութեան կամ մարդկութեան մէջ մի բարձր, բարոյական, իդէալական միտք է յայտնվում,—այլ երբ որ հարց է լինում տարեկան երեք, չորս հազար ռուբլ ռոճիկի մասին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մարտի 6-ին

Հեռագիրը ձեզ արդէն հաղորդել է այն սրբազան համբաւը, որից ամբողջ Ռուսաստանը ընկաւ սուգի մէջ։ Դիտել, հետաքրքրել, ծանրութեթև անել տեսած ու լսածները այժմ, այս րոպէիս, անկարելի է. դեռ ևս մարդու սրտի գրգռված դրութիւնը տեղ չէ տալիս մտքին,—նա յափշտակված է միայն զարհուրանքի զգացմունքով։ Եթէ մի առ մի գրելու լինեմ, միայն ինձ պատահած, պետերբուրգցիների հոգու վրհատութեան արտայայտութիւնները, պիտի այն ժամանակ նկարագրեմ վշտալի ու տխուր տեսարաններ, որոնք մին միւսի ետևից, ինչպէս մի կալէյդօսկոպում, խառնի խուռն անցնում են աչքիս առաջ։ Ո՞րի վրա դարձնեմ ձեր ուշադրութիւնը.... Բիսակովի սրբապիղծ ձեռքը սև և տխուր երես բացեց Ռուսաստանի պատմութեան մէջ, սպանելով նրա Ազատիչ Թագաւորին։

Որ փողոցով էլ որ վերադառնալու լիներ մանէժից, մարտի 1-ին, Թագաւորի կեանքին պատրաստած էին հրէշաւոր վտանգներ. անցեալ օրը Մալայա Սադովայա փողոցում ոստիկանութիւնը բաց արեց ստորերկրեայ դեռնափորը, անցկացրած պանրի խանութից, երկու պուդ դինամիթով լիքը։ Այս փողոցով էր անցնում միշտ Կայսրը մանէժ գնալուց։ Եթէ կրակ ընկներ այս դինամիթը, ականի շրջակայքում ոչ մի տան քարը քարի վրա չը պիտի մնար։

Այն ճայթող գործիքը, որից ընկաւ Թագաւորը, մինչև այժմ յայտնի չէր պիրոտիխնիկական գիտութեան մէջ։ Մեքենան թիթեղեայ արկղիկ է, ինքը ու հինգ բթաչափ երկայնութիւններով կողմերում։ Այս արկղիկի երկու զանգան, բայց մի և նոյն ժամանակ դէպի միմեանց ուղղահայեաց հարթութիւնում անկված են երկու պղնձէ գլաններ։ Այս գլանների մէջ ածած է բերթօլետեան աղ ու անտիմոն, բացի սրանից կան սրանց մէջ ևս ապակէ գլանիկներ ծծմբաթթուով լիքը։ Այս ապակեայ խողովակների վրա հագցրած են ծանր գունտեր։ Թիթեղեայ արկղիկի մի անկիւնում կպցրած է մի փոքրիկ ատենիկ (камера) լի դոռացող սնդիկով (гремучая ртуть) ու նիտրոգլիցերինով։ Ամբողջ թիթեղեայ արկղիկը լցրած է դինամիթով։ Գործողութիւնը այսպէս է՝ երբ վայր գցէք այդ արկղիկը, երկու ապակեայ գլանիկներից մէկը անպատճառ պիտի կոտրվի, ծծմբաթթուն խառնվելով անտիմոնի ու բերթօլետեան աղի հետ կը գոյացնի կրակ, որ հաղորդվելով կրակատար ժապաւէնով սնդիկին ու նիտրոգլիցերինին, բոլոր ընտրել տալ այդ պաշտօնի վրա, իւրաքանչիւրը իր ծանօթներին և ազգականներին է դիմում և նրանց միջոցով իր համար ագիտացիա անում, որպէս զի ընտրվի այդ պաշտօնի վրա։ Եւ ահա քանի մի օր է խօսակցութիւնը Թիֆլիսում միայն դրա վրա է, թէ ո՞վ կը լինի այն բաղդաւորը, որ կը ստանայ 3000 ռուբլիանոց չաղ տեղը՝ Կիրակոսեանը, Մարտիրոսեանը, թէ Պետրոսեանը....

Եւ նշանաւորն այն է, որ կանդիդատների վրա խօսելով, հասարակութիւնը ի նկատի չէ առնում սրա կամ նրա այս և այն արժանաւորութիւնը յիշեալ պաշտօնը վարելու համար, այլ խօսում է միմիայն այն բանի վրա, թէ կանդիդատներից ո՞րին աւելի նպաստում են հանգամանքները, ո՞վ աւելի աջողութիւն և հաւանականութիւն կունենայ ընտրվել բանկի դիրեկտոր...

Խօսելու ժամանակ չեն ասում՝ «Կիրակոսեանը աւելի յարմարութիւն ունի ընտրվել բանկի դիրեկտոր, որովհետև ուսումնասիրել է ֆինանսական գիտութիւնը, կամ ազնիւ մարդ է»,—ոչ, Թիֆլիսցիների դատողութիւնը բոլորովին այլ է։ «Կիրակոսեանը աւելի հաւանականութիւն ունի ընտրվել, քան թէ Մարտիրոսեանը, ասում է Թիֆլիսցին խորհրդաւոր կերպով, որովհետև առաջինը դիմել է արդէն այս ինչ հաստատութիւնին և սա խոստացել է նրան իր հովանաւորութիւնը բանկի ընդհանուր ժողովի քուէարկութեան ժամանակ։»

Ահա Թիֆլիսցու դատողութեան ձևը, ահա այն այրվող, օրական, կենսական հարցերը, ահա այն մտաւոր և բարոյական ձգտումները, որոնք զբաղեցնում են Թիֆլիսցուն, այդ անշունչ էակին շունչ և կենդանութիւն են տալիս։

Թիֆլիսցին զարթնում է իր մշտական անտարբերութենից, իր խոր քնից, նրա կիրքը շարժվում է, նա յուզված, գրգռված, տենդային դրութեան մէջ է լինում ոչ թէ երբ որ հասարակութեան կամ մարդկութեան մէջ մի բարձր, բարոյական, իդէալական միտք է յայտնվում,—այլ երբ որ հարց է լինում տարեկան երեք, չորս հազար ռուբլ ռոճիկի մասին։

Գ. Ա.

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ Վ.Է.Պ

(1722—1728)

—

ԺԱ.

Մըցխէթի բոլոր ջադուկները, ժողովրդական պառաւ բժիշկները, որոնք բարեբախտաբար այն օր ուխտաւորների մէջ էին գտնվում, հաւաքվեցան Թամարի մարմնի շուրջը։ Նրանց հետաքրքրութիւնից երևաց, որ օրիորդը բոլորովին խեղդված չէր։ Նրա երակը դեռ զարկում էր և թոյլ շնչառութիւնը իսպառ խափանված չէր։ Իրանց կախարդական և բժշկական բոլոր հնարները գործ դնելուց յետոյ, օրիորդին այնպէս ուշաթափ, մի պատգարակի վրա դնելով, տուն տարան։

Ժողովրդի մէջ զանազան կերպով էին բացատրում Թամարի հետ պատահած դժբախտութիւնը։ Իսկ Թաւադների շրջանի մէջ խօսում էին, թէ օրիորդին բռնութեամբ ցանկանում էին կնութեան տալ Լևանին, որին նա ատում էր, և յուսահատութիւնից մտածեց ջրախեղդ լինել։ Մի և նոյն ժամանակ աւելացնում էին, թէ օրիորդը ծածուկ սիրում էր «մէկին», որի հետ ամուսնանալ չէր կարող. իսկ ո՞վ էր այդ «մէկը»,—ոչ ոք չը գիտէր։

Թամարի հետ զբօսնող օրիորդները նոյնպէս այլ և այլ կերպով էին պատմում անցքը. մի քանիսը ասում էին, թէ նա ինքն իրան գետը գցեց, միւսները ասում էին, թէ անզգուշութիւնից ընկաւ։ Սալօմէն, որ նրա մօտ էր դժբախտութիւնը պատահելու րոպէում, պատմում էր, թէ օրիորդը մօտեցաւ գետեղրին, նայում էր ջրի վրա. յանկարծ գետեղրի այն մասը, որի վրա կանգնած էր նա, փուլ եկաւ, և նա գլորվեցաւ գետի մէջ։ Այդ տեղը բաւական բարձր էր ջրի մակերևոյթից, երևում էր, որ տակից ջրով ողողված էր։ Նա աւելացնում էր, թէ ինքն էլ անպատճառ մի և նոյն դժբախտութեանը կը հանդիպէր, եթէ ուղիղ Թամարի մօտ կանգնած լինէր։

Սալօմէի պատմութիւնը ամենից ճիշտն էր և աւելի հաւանական, մանաւանդ, որ պատանի Դաւիթը հաստատում էր մի և նոյնը։ Նա Թագնելով նպատակը, որ բերեց իրան օրիորդների խումբի մօտ, մնացած պատմութեանը այս ձևն էր տալիս. Թէ ինքը թփերի մէջ որոնում էր մի ոչխար, որ այնօր կորել էր. յանկարծ նրա ականջին հասաւ օրիորդների արձակած ճիչն ու աղաղակը, վազեց դէպի այն կողմը. տեսնելով Թամարի գետը ընկնելը, իսկոյն նետվեցաւ ջրի մէջ. նրան բռնեց ուղիղ այն ժամանակ, երբ տակաւին ջրի տակը չէր խորասուզված և կարողացաւ երկար պահել մակերևոյթի վրա։ Եւ եթէ չը յաջողվեց իսկոյն դուրս հանել, պատճառն այն էր, որ գետի այն տեղումը հոսանքը սաստիկ սրնթաց էր։

Ինքը Թամարը, երբ մի քանի օրից յետոյ բոլորովին ուշի եկաւ, ոչինչ չէր յիշում, ոչինչ պատմել չէր կարողանում, թէ ինչպէս պատահեց իր հետ վտանգը։ Նա բախտաւոր էր համարում իրան նրանով միայն, որ ազատվեցաւ Դաւիթի ձեռքով, և այն օրից իր անձը համարում էր նրա սեպհականութիւն, և այն օրից պատանին բոլորովին պաշտելի դարձաւ նրան։

Մեծ պարոնը և նրա տիրուհին Թամարին պատահած դժբախտութեան առաջին օրը, միանգամայն զբաղված լինելով իրանց հիւանդով, բոլորովին մոռացել էին նրա աղատչին։ Երկրորդ օրը, թէև հիւանդը դեռ ևս իրան լաւ չէր զգում, մեծ պարոնը իր դրանիկներից մէկին ուղարկեց կանչելու Դաւիթին։ Նրան դատն ոչխարների հոտի մօտ, իր հովուական հագուստով։ Երբ յայտնեցին, թէ մեծ պարոնը կանչում է, պիտի վարձատրէ նրան, այդ միջոցին բարեսիրտ Սիկօն, ուրախութեան արտասուքը աչքերում, գրկեց պատանուն, ասելով.

—Դէ, հիմա գնա, Աստուած բարի ճանապարհ տայ, ես քեզ միշտ ասում էի, որ վերջը Թաւադ կը դառնաս. տեսար, կատարվեցաւ իմ խօսքը։

Այդ խօսքերը այն աստիճան անկեղծ, սրտաշարժ էին, որ պատանին նոյնպէս չը կարողացաւ զսպել իր արտասուքը, և համբուրելով իր բարեկամի ձեռքը, ասաց.

—Ես աւելի ուրախ կը լինէի, սիրելի Սիկօ, եթէ ինձ թողնէին միշտ քեզ մօտ մնալ, միշտ քեզ հետ լինել այդ լեռների մէջ։

Հովուապետը նրան ճանապարհ դրեց, բաւական հեռանալով իր հօտից։ Երբ բաժանվում էին, դարձեալ գրկեց պատանուն, ասելով.

—Տես, Դաւիթ, չը մոռանաս Սիկօին։

—Շուտ-շուտ քեզ մօտ կը գամ, Սիկօ, պատասխանեց նրան պատանին բարեկամական մըտերմութեամբ,—քեզ չեմ մոռանայ։

Մեծ պարոնը նստած էր իր պալատի սրահում, որի ճակատը բաց, առջևից ցած վանդակապատով կարած, մի ծածկոց էր. այդ կացուցանում էր նրա ամառնային դիւանատունը։ Այնտեղ մերկ յատակի վրա, որ ծեփած էր հասարակ կաւով, դրված էր մի մեծ տախտ, կոշտ-կոպիտ կերպով շինված անգոյն փայտից, և ծածկված պարսկական գորգով ու մի քանի բարձերով։ Նրա վրա նստած էր մեծ պարոնը իր անբաժան խորհրդականների հետ։ Այնտեղ էր տիրուհին, այնտեղ էր Թամարի խորթ մայրը, որոնց մէկը նստած էր մեծ պարոնի աջ կողմում, իսկ միւսը ձախ կողմում։ Նրանցից ներքև չորված էին Արչիլը, Լևանը, Զաքարա և Աւէքի Թաւադի որդիները։ Ժառանգը այդ ժամանակ, նրանց աչքի առջև, բակում խաղ էր անում մի փոքրիկ եղջերուի հետ, որ նրան ընծայ էին բերել։ Բակում մանէին գալիս մի քանի հնդկահաւեր և աղբերի միջից ճճիներ, պոզոնիներ էին որոնում։ Նրանց արուն փքված, կնճիթը երկարացրած, թևքերը գետնին քսելով, սիրային ախորժ հոգեմայլութեան մէջ պտրտվում էր իր նազելի էգերի շուրջը, երբեմն իր կոկորդային կանչիւնով աղմկելով բակի գերեզմանական լռութիւնը։

—Ձեր հնդկահաւերը անցեալ տարի չաւելացան, հարցրեց Լևանը, որ վաղուց մի առարկայ էր որոնում տիրուհու հետ խօսելու համար։

—Ձաւելացան, պատասխանեց տիրուհին հո-

ցավառվում են այդ նիւթերը, որոնց ճայթիւնը իր կողմից հաղորդվում է դինամիթին։ Ամբողջ արկղիկի ծանրութիւնը վեց ֆունտ է։

Ահա այն դժոխային մեքենան, որ չարագործները պատրաստել էին Կայսրի դէմ, որով կարողացան իրանց դժոխային նպատակը իրագործել։

Գաս. Եաղուբեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Մարտի 9-ին

Ժողովելով իմ ուսումնարանի աշակերտներից, աշակերտուհիներից և մի քանի բարեսէր տիկիններից 63 ռուբլի, խոնարհաբար խնդրում եմ ձեզանից հասցնել այս փողը Վանայ հիւանդանոցին և նուիրատուների ազգանունները տպագրել ձեր «Մշակ» լրագրում։

Աշակերտք. Թադէոսեանց 5 ր., Պատուական Մարգարեանց 1 ր., Արշակ Խիդիրեանց 1 ր., Շմաւոն Ղևոնդեանց 1 ր., Համբարձում Ղևոնդեանց 1 ր., Միքայէլ Ղևոնդեանց 1 ր., Ահարոն Լազարեանց 1 ր., Սեդրակ Լազարեանց 1 ր., Գալուստ Խաչատուրեանց 1 ր., Յովհաննէս Շմիդտ 1 ր., Աղէքսանդր Մայիլեանց 1 ր., Եղիայ Մայիլեանց 1 ր., Զաքարիա Սարուխանց 1 ր., Աւետանց Սեդրակ 1 ր., Աւետանց Գրիգոր 1 ր., Միքայէլ Բէգլարեանց 1 ր., Վահան Քալանթարեանց 50 կ., Պօղոս Սահարբէկեանց 50 կ., Պետրոս Սահարբէկեանց 50 կ., Իսահակ Թառահեանց 50 կ., Սիսակ Մարտիրոսեանց 50 կ., Աղէքսանդր Միքայէլեանց 50 կ., Գրիգոր Վարդանեանց 50 կ., Գրիգոր Գուրգէնեանց 50 կ., Գրիգոր Միրզաբէկեանց 40 կ., Միքայէլ Գէօղչայեանց 45 կ., Անդրէաս Թառահեանց 40 կ.։ Աշակերտուհիք. Մարիամ Մաղաթեանց 3 ր., Մարիամ Շահզիդանեանց 2 ր., Մարգարիտ Դիլդարեանց 2 ր., Աննա Մէլիքեանց 2 ր., Սօփիայ Սանամեանց 1 ր., Սօփիայ Ղուլալեանց 1 ր., Թագուհի Մարգարեանց 1 ր., Շաշինկայ Ղազարեանց 1 ր., Զարվարթ Շահնազարեանց 1 ր., Վարդուհի Բուդաղեանց 1 ր., Թագուհի Տէր-Ղազարեանց 1 ր., Եղիսաբէթ Խանչալեանց 1 ր., Զարվարթ Նազարեանց 1 ր., Սօփիայ Մայիլեանց 1 ր., Մարիամ Բաղդասարեանց 1 ր., Աննա Շահնազարեանց 1 ր., Հեղինէ Կրասիլնիկեանց 1 ր., Եղիսաբէթ Խաչպանեանց 1 ր., Հեղինէ Մարտիրոսեանց 50 կ., Ֆուրուզա Աղամալեանց 50 կ., Սօփիա Կրասիլնիկեանց 50 կ., Եղիսաբէթ Կրասիլնիկեանց 50 կ., Եանրումեանց Ովսանա 40 կ., Մարիամ Տէր-Ստեփանեանց 40 կ., Սօփիայ Վարդանեանց 40 կ., Յուստինէ Ղարագէտեանց 40 կ., Աննա Շանաբանդեանց 30 կ., Ղազարեանց Եկատերինէ 30 կ., Ստեփանեանց Թագուհի 20 կ., Աշխէն Բարսեղեանց 20 կ., Գայիանէ Պապովեանց 20 կ., Եղիսաբէթ Տէր-Յովհաննիսեանց 20 կ.։ Տիկնայք. Զառվարդ Մարտիրոսեանց 1 ր., Եվայ Շահզիդանեանց 2 ր., Զամբաղ Մարդանեանց 1 ր., Թագուհի Տէր-Ղազարեանց 1 ր., Վարդանուշ Ղուլալեանց 50 կ., Սանամ Կոստանդեանց 50 կ., Նունէ Քալանթարեանց 3 ր. 25 կ., Ծաղիկ Մկրտչեանց 50 կ., գումարն է 63 ռուբլի։ Ճանապարհածախսը ես եմ վճարում։

Վարժուհի Քալանթարեան ուսումնարանի
Նունէ Քալանթարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, մարտի 15-ին, հանգուցեալ Թագաւոր Կայսրի Թաղման օրը, Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում հայոց ամբողջ հոգևորական դասի ներկայութեամբ հանդիսաւոր կերպով «Կատարվեցաւ հանգուցեալ Կայսր Աղէքսանդր Նիկոլայեվիչի հոգեհանդիսատ։ Եկեղեցին և նրա բակը լի էին Թիֆլիսի հայ հասարակութեան բազմութեամբ։ Պատարագիչը սրբազան Աղաֆիրեանն էր, որը հանգուցեալ Կայսրի մահուան առիթով մէկ սրտաշարժ քարոզ ասեց, որ մեծ տպաւորութիւն գործեց հանդիսականների վրա։ Ուղիղ ժամը մէկի կէսին եկան եկեղեցի Փոխարքայի օգնական իշխան Մելիքով, գլխաւոր կառավարութեան մեծաւոր գեներալ Ստարոսելսկի, Թիֆլիսի պ. նահանգապետը և այլ բազմաթիւ մեծաւորներ և գեներալներ։ Պատարագը շարունակվեց մինչև ժամը երկուսի կէսը։

—

Բժիշկ Միրիմանեանց խնդրում է մեզ ուղղել հետևեալ տպագրական սխալը։ «Մշակի» № 35 մէջ տպված է եղել Կարակաշ, իսկ պէտք է լինի Կ ա ր ա կ ո ւ ր ա որ տեղի անուն է և երկու թուրքերէն բառից է բաղկացած և նշանակում է «սև գայլ»։ Կարակուրտը Սարիկամիշից մօտաւորապէս 25 վերստ հեռաւորութիւն ունի և Կուբանեան հեծելազօր գնդի շտաբն է, որտեղ պատիւ ունեմ ես կատարել նոյն գնդի գլխաւոր բժիշկի պաշտօնը։»

—

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ, մարտի 11-ից, որ այդ քաղաքում առաջին պիտոյքի մթերքների գները հետևեալներն են։ Ալիւրի պուդը արժէ 1 ռուբլ, իւղի ֆունտը 40 կոպէկ, ոչխարի մսի ֆունտը 10 կոպէկ, տաւարի մսի ֆունտը 8 կոպ., ձուի հատը 2 կոպ., ածուխի պուդը 1 ռուբլ։

—

«Новости» լրագիրը հաղորդում է որ մարտի 1-ին եղեռնագործութենից յետոյ աւելի քան 50 անձինք կալանաւորված են Ս. Պետերբուրգում։ Կալանաւորվածներից 30 հոգի երկին ազատութիւն ստացան։

—

«Моск. Вѣд.» լրագիրը լսել է որ Ս. Պետերբուրգի պօլիցիան կատարելապէս կը վերանորոգվի, որովհետև մարտի 1-ի եղեռնագործութիւնը ցոյց է տուել, որ նրա կազմակերպութիւնը պակասաւոր է։

—

«Моск. Вѣд.» լրագիրը մի երկար առաջնորդող յօդուածում խնդրում է Թագաւոր Կայսրին դալ Մոսկվա և այդ քաղաքում բնակվել, Թողնելով Ս. Պետերբուրգ, որ Կատկովի լրագրի կարծիքով արևմտեան յեղափոխութեան բուն է, այն ինչ Մոսկվա կատարելապէս ռուսաց քաղաք է։

—

Լրագիրները լսել են որ արտաքին գործերի մինիստր և կանցլեր Գորչակովի տեղ կը նշանակվի Մոսկվայի գեներալ-նահանգապետ Դոլգորուկով, մինիստր Ադլերբերգի տեղ կոմս Օրլով, Լորիս-Մելիքով մնում է ներքին գործերի մինիստր, ազգային լուսաւորութեան մինիստրի պաշտօնի վրա նշանակվում է Պօբեդոնոսցեվ, արդարութեան մինիստր սենատոր Պոլովցեվ, պատերազմական Օբրուչեվ, ֆինանսների Բունգէ։

—

«Петерб. Газета» լրագրի խօսքերին նայելով կայսերական թատրոնները փակած կը լինեն վեց ամիս, իսկ մասնաւոր թատրոններին, ինչպէս լսվում է, թոյլ կը տրվի ներկայացումներ տալ Թագաւորի մահվան օրից վեց շաբաթ յետոյ։

—

Թագաւորասպան Ռիսակովի և նրա ընկերների վրա դատաստանը նշանակված է մարտի 20-ին։

—

Ս. Պետերբուրգից լրագիրները հաղորդում են որ Ս. Պետերբուրգում և այդ քաղաքի երկաթուղիների կայարաններում բազմաթիւ տարակուսանքներ են պատահում. կալանաւորվում են բոլորովին անմեղ անձինք, որոնց վրա այն պատճառով կասկած է ընկնում, որ նրանք ճանապարհ են ընկնում Ս. Պետերբուրգից։

—

«Новости» լրագիրը հաղորդում է որ Նորերումս կալանաւորված է Կլէտկին անուանված մէկը, որ եղել է նախկին Ш-րդ բաժանման մէջ քարտուղարի օգնական։ Նա կալանաւորված է յեղափոխական Կոլոտկեվիչի տանը։ Կլէտկին վաղուց է որ մասնակցում էր յեղափոխական բոլոր շարժումներին և դեռ Ш-րդ բաժանման մէջ ծառայելով մասնակից էր այլ և այլ դաւաղրութիւններին Կայսրի կեանքի դէմ։

—

Այն լուրը որ իբր թէ երկրորդ ռումբը Կայսրի դէմ, որի ճայթման զոհ գնաց հանգուցեալ Կայսրը, գտել էր Տիւտչեվ անուանված փախըստական քաղաքական յանցաւորը, սուտ է։ Տիւտչեվ դեռ աքսորանքի մէջ է Սիբիրում և այս օրերս այնտեղից նամակ հրատարակեց «Голосъ» լրագրում, որտեղ յայտնում է թէ դեռ Սիբիրումն է և թէ ինքն ու իր ընտանիքը միշտ հաւատարիմ են եղել Կայսերական ընտանիքին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

—

Նորերումս իտալական Թագաւորը իր ընտանիքով մի ճանապարհորդութիւն կատարեց Սիցիլիա կղզու վրա, որի վրա գտնված բոլորը քաղաքները, գիւղերը և համայնքները ոգևորութեամբ ընդունեցին Թագաւորական ընտանիքին։ Այդ հանգամանքը առիթ տուեց իտալական պատգամաւորների ժողովի հանրապետական անդամ Կավալոտտիին հետևեալ հարց առաջարկել կառավարութեանը։ Կավալոտտիի կարծիքով Թագաւորի ճանապարհորդութիւնը իր ընտանիքի հետ չափազանց Թանկ նստեց Սիցիլիայի համայնքներին։ Կղզու վրա գտնված քաղաքները և գիւղերը ապարդիւն ծախսեր են արել, որ վատ ազդեցութիւն կունենայ նրանց բիւդժետի վրա և կը խանգարէ մուտքի և ծախսի հաւասարակշռութիւնը։ Այդ հիման վրա Կավալոտտի հարկաւոր է համարում հարցնել կառավարութեանը՝ արդեօք նա օգուտ քաղեց իր օրինաւոր իրաւունքից և ընդդիմադրեց արտաքոյ կարգի ծախսերին, որոնք բարձր են Սիցիլիայի կարողութենից։ Հաշուելով համայնքների և գաւառական վարչութիւնների ծախսերը Թագաւորի ընդունելութեան համար, Կավալոտտի ասաց, որ երկիրը պարտքեր պէտք է վերցնէր, որոնց պատճառով աւելորդ հարկեր կը դնվեն ժողովուրդի վրա և այդպիսով կը Թանգանան անհրաժեշտ մթերքների գները։

Կառավարութեան անդամներից մէկը ասաց, որ առհասարակ Թագաւորների ճանապարհորդութիւնները շատ օգտաւէտ են և որ յիշեալ օրէնքից օգուտ է քաղել միայն հանգուցեալ կավորը 1858 Թուականին, բայց նրա հրամանը անուշադիր է Թողված։ Զը նայելով այդ իրողութեանը այն ժամանակվայ պատգամաւորների ժողովը ոչինչ հարց չառաջարկեց կառավարութեանը։

դուռ հանելով.—Կէկէի աչքը քարը կը ծակէ (նրա խօսքը պառաւ իշխանուհու մասին էր). անցեալ տարի ոտը կոտրվեր ու այստեղ չը դար. մտաւ բակը, տեսաւ երկու տանից աւելի ճրտեր բակումը ման էին գալիս. «վայ մէ, ասաց, այդ ինչ սիրուն ճրտեր են». նրանից յետոյ խեղճ ճրտերը մինը միւսի ետևից սկսեցին սատկել։

Այդ միջոցին մեծ պարոնի մարդիկը ներս մտան, իրանց հետ բերելով Դաւթին։ Պատանին համարձակ կերպով առաջ եկաւ, և գլուխ տալով, կանգնեց փայտեայ վանդակապատի առջև, որ բաժանում էր բակը սրահից։

—Աստուած է վկայ լաւ տղայ է երևում, խօսեց Արչիլը, ոտքից ցգլուխ նայելով պատանուն։

—Հայ է... ասաց Լևանը, այնպիսի մի արհամարհական եղանակով, կարծես, հայը լաւ լինել կարող չէր։ Նրա սիրտը ծակում էր այն նախանձը, թէ ինչու այդ «հայը» կարողացաւ ազատել Թամարին, իսկ ինքը ոչինչով չը կարողացաւ օգնել նրան։

—Հայ է, բայց զօշաղ տղայ է, պատասխանեց տիրուհին, որին դիւր չեկաւ Լևանի նկատողութիւնը։

—Հայ էլ կայ, հայ էլ կայ. ամեն հայ խօ մէկ չէ, պատասխանեցին Զաքարա ու Աղէքսի Թաւադի որդիները։ Նրանք միշտ միասին էին խօսում։

Իր խորհրդականների յիշեալ նկատողութիւններից մեծ պարոնը արդէն բաւական նպաստաւոր գաղափար կազմեց Դաւթի վերաբերութեամբ, և դառնալով նրան, ասաց.

—Դու մահից ազատեցիր Թամարին, Դաւիթ, ասա, ինչ ես ցանկանում, որ ես տամ քեզ քո քաջութեան փոխարէն։

—Ես ձեր ողջութիւնն եմ ցանկանում, մեծ պարոն, պատասխանեց պատանին սիւնեցու համարձակութեամբ։— Ես լինձ այսքանով ևս բախտաւոր եմ համարում, որ կարողացայ մի փոքրիկ ծառայութիւն անել իմ տիրոջը։

Մեծ պարոնի բոլոր խորհրդականները զարմացած միմեանց երեսին նայեցին։ Պատանու համեստ, խելացի պատասխանը բոլորին հաճոյ թուեցաւ, բացի Լևանից։ Նրանք չէին կարող երևակայել, որ մի հայ, որ մի հովիւ ընդունակ լինէր այսպէս խօսելու։

—Պահանջիր, որդի, ինչ որ ցանկանում ես, ես կը տամ քեզ, կրկնեց մեծ պարոնը։

Պատանին իսկոյն չը պատասխանեց։ Նա մտածում էր՝ չոքել իր տիրոջ առջև, նրա ոտները համբուրել և յայտնել նրան, թէ ինքը սիրում է Թամարին և Թամարն էլ սիրում է իրան. թէ աշխարհի բոլոր փառքը, բոլոր հարստութիւնը իր աչքում արժէք չունեն, միայն թէ Թամարը իր կինը լիներ։ Բայց նա այդ չը խնդրեց. նա իրան դեռ այնքան անարժան էր համարում, որ Թամարի մասին մտածելն անգամ թւում էր նրան չափազանց անհամեստութիւն։

—Մեծերի կամքը սուրբ է, պատասխանեց պատանին, երբ մեծ պարոնը միւսանգամ դարձաւ նրան.—ինչ որ շնորհելու լինի իմ տէրը, ես գոհ կը լինեմ և աղօթող նրա Թանգագին կեանքի համար։

—Աստուած է վկայ, այդ տղան լաւ տղայ է, դարձեալ խօսեց Արչիլը։— Երկար հարց ու փորձ պէտք չէ, Դաւիթը Թաւադութեան արժան է, աւելացրեց նա։

—Արժան է, կրկնեց տիրուհին, հաստատելով Արչիլի խօսքը։—Պանդուխտ է, օտարական է, այստեղ ոչ ոք չունի, ես նրան կը վեր առնեմ մեր տանը, որպէս իմ որդու ընկեր և նրա դաստիարակ։—Տեսնում էք, ինչ խելացի տղայ է. այսքան խելք մեր վարդապետներն էլ չունեն։

Պատանին հովուի օգնականից յանկարծ դարձաւ մեծ պարոնի ժառանգի ընկեր և դաստիարակ, մի քանի խելացի պատասխանների պատճառով, որ նա դուրս էր բերել Տաթևի վանքից։ Նրա ուրախութեանը չափ չը կար, թէև նա զգուշութեամբ թագցրեց։ Ոչ Թաւադութիւնը և ոչ էլ ժառանգի հետ ընկերակցութիւնը չէին հրապուրում նրան։ Նա ուրախ էր այն անսպասելի բախտով, որ պիտի ընդունվի մի տան մէջ, ուր բնակվում էր և Թամարը։

Պատանու ուրախութիւնը նկատեց միայն Թամարի խորթ մայրը, որին յայտնի էին Դաւթի սիրային յարաբերութիւնները օրիորդի հետ։ Եւ նա, որ մինչև այն րօպէն լուռ էր, արդարացրեց տիրուհու ցանկութիւնը, ասելով.

—Այդ լաւ կը լինի, շատ լաւ կը լինի, եթէ այս տղային կընդունենք մեր տան մէջ։ Ես էլ իմանում եմ, որ Դաւիթը շատ խելացի տղայ է. նա մինչև անգամ գրել կարդալ էլ իմանում է։

Վրացու՞ կինը իր խելքով միշտ բարձր է տղամարդից. այդ իսկ պատճառով կանանց վճիռը իսկոյն իրագործվեցաւ։ Մեծ պարոնը հրամայեց տանել պատանու հագուստը փոխել և իր հանդերձանից նրան լաւ խալաթներ ընծայել։ Յետոյ նա հրամայեց գրել Դաւթի Թաւադութեան հրովարտակը, որպէս զի, իբրև ազնուական, նա արժանաւորութիւն ստանայ մտնել իր դրանիկների կարգը և ընդունված լինել պալատում։

Բայց ինչ ստանայական խորամանկութիւն էր, որ դրդեց Թամարի խորթ մօրը համաձայնվել տիրուհու հետ,— այդ մենք կը տեսնենք յետոյ։ Իսկ Դաւթի հրովարտակը գրելու համար դեռ բաւական դժուարութիւններ կային։ Այնտեղ, դիւանատան մէջ նստած խորհրդականներից և ոչ մէկը գրագէտ էր։ Մեծ պարոնի քարտուղարը, նրա միակ գրագիրը՝ Գաբրիէլ սարկաւագը այնտեղ չէր։ Իսկ Գաբրիէլին գտնելը նոյնպէս հեշտ բան չէր։ Մարդ ուղարկեցին նրան որոնելու։

Գաբրիէլին գտան մի գիւղացու խրճիթում, գինու լիտրան կշտին դրած, նստել էր։

—Կը գրեմ, ցաւդ առնեմ, կը գրեմ, ասում էր նա տան տիրոջը,— մի այնպիսի գիր կը գրեմ, որ եթէ քարի վրա դնես, քարը կը ծակէ։

Գաբրիէլի հրաշալի գիրը, որ պիտի քարը ծակէր, շարժեց տան տիրոջ ուրախութիւնը, որը շնորհակալութեամբ դարձաւ դէպի սարկաւագը, ասելով.

—Գրիր, ցաւդ առնեմ. կինս մէկ շաբաթից աւել գժուածի նման է, գլխումը խելք չի մնացել։

—Ո՞ր տեղից խելք մնայ, գոչեց պառկած հիւանդը ցնցոտիների տակից, — մեռնում եմ, մեռնում...

Թէպէտ իտալական պարլամէնտի մէջ հանրապետական կուսակցութիւնը բաւական մեծ է, բայց կավալոտտիի հարցը ոչ ոք չը պաշտպանեց և պարլամենտը անցաւ հերթական հարցերի քննութեանը։

ԹԻՒՐՔԻԱ

—

Եւրոպական դեսպանների բանակցութիւնների մասին Թիւրքաց հաւատարմատարների հետ յունական խնդրի վերաբերութեամբ Կ. Պոլսից „Times“ լրագրին գրում են հետեւեալը մարտի 11-ից։ Շատ բան տեղիք է տալիս կարծելու, որ Թիւրքաց հաւատարմատարները ընդունեցին դեսպանների պահանջը, որ բանակցութիւնների սկսելուց առաջ Բ. Դուռը յայտնէ, թէ բացի հոկտեմբերի 3-ի շրջաբերականի մէջ յայտնածներից, էլի որքան զիջումներ մտադիր է անել յոգուտ Յունաստանի։ Հաւանական է, որ նոր սահմանների նախագիծը դեսպանների խորհուրդը կը քննէ մարտի 13-ի նիստի ժամանակ։ Շատերը երկիւղ էին կրում, որ Բ. Դուռը չի դուրս գայ հոկտեմբերի շրջաբերականի սահմաններից և կը պահանջէ պետութիւններից ցոյց տալ զիջումների ամենափոքր չափը, որով նրանք կը բաւականան։ Այն հանգամանքը, որ Բ. Դուռը չիրագործեց իր այդ դիտաւորութիւնը, որի հետեւանքը բանակցութիւնների անաջողութիւնը կը լինէր, ապացուցանում է Թիւրքաց կառավարութեան պատրաստականութիւնը առանց պատերազմի համաձայնութիւն կայացնելու մասին։

Վիէննայից նոյն լրագրին հաղորդում են։ Դեսպանների երկրորդ խորհուրդը հաստատեց առաջին խորհուրդի գործած լաւ տպաւորութիւնը, որովհետեւ Բ. Դուռը ցոյց տուեց իր խաղաղասիրական նպատակները։ Բանակցութիւնների աջողութիւնը հաւանական է դառնում, թէպէտ նրանք գաղտնի են պահվում։ Այնու ամենայնիւ բաւական ժամանակ է հարկաւոր գործը վերջացնելու համար։

Կ. Պոլսից „Polit. Corresp.“ լրագրին գրում են հետեւեալը։ Մուխտար-փաշա, որ ներկայ է եղել նախկին բանակցութիւններին յունական հաւատարմատարների հետ, շատ լաւ ծանօթ է հարցի հետ։ Սուլթանը 'ի նկատի է առել նրա համոզմունքը, որ յոյն-թիւրքական խնդիրը կարելի է խաղաղ ճանապարհով լուծել։ Ասում են, թէ Մուխտար-փաշա հաւատացնում էր, որ Թէսսալիայի յոյն ազգաբնակութիւնը կապատամբվի, երբ յունական զօրքերը կը մտնեն այդ նահանգը։ Ցայտնի չէ սուլթանը Էպիրոսի մէջ զիջումներ կանէ թէ ոչ։ Թիւրքերը հաւատացնում են, որ պետութիւններից երկուսը համոզվել են, թէ Ալբանիայի դրութիւնը 'ի նկատի առնելով անկարելի է Էպիրոսի մէջ որ և է զիջումն անել և այդ հայեացքը բաժանում է անգլիական դեսպան պ. Գոշէն։ Թէպէտ դեսպանները լռում են և ոչինչ չեն յայտնում մինչև անդամ իրանց քարտուղարներին, այնու ամենայնիւ Բ. Դրանը յայտնի է նրանց տուած յանձնարարութիւնները և նա հաւատացած է, որ պետութիւնները կը ստիպեն Յունաստանին Բ. Դրան առաջարկած փոքր ի շատէ յարմարաւոր պայմանները ընդունել։ Ուրեմն այստեղ էլ նոյն երևակայական գաղափարներն ունեն Եւրոպայի մասին, ինչ որ Աթէնքի մէջ։ Ոչ Թիւրքերը և ոչ յոյները չեն հասկանում գործերի իսկական դրութիւնը և այդ խաբուսիկ կարծիքները Եւրոպայի քաղաքականութեան մասին գործերի դրութիւնը վտանգաւոր են դարձնում։ Իտալական և ֆրանսիական դեսպանները յայտնել են, որ յոյն-թիւրքական պատերազմը աւելի հաւանական է, քան թէ խաղաղութիւնը։ Միւս դեսպանները աւելի զգոյշ են։ Գործերի դրութեան հետ լաւ ծանօթանալու համար պէտք է իմանալ, թէ Ալբանիայի մէջ ինչեր են պատահում։ Ցայտնի է, որ Թիւրք սատիճանաւորները ոչինչ նշանակութիւն չունեն Ալբանիայի մէջ և որ երկրի մի մասի մէջ իշխանութիւնը ալբանական միութեան ձեռքին է։ Ոչոքին յայտնի չէ Բ. Դրան յարաբերութիւնները միութեան հետ։ Մի քանի գաւառների մէջ, որտեղ իշխում է ալբանական միութիւնը, նա արգելում է Բ. Դրանը զինուորներ հաւաքել, միւսների մէջ այդ գործը կատարվում է առանց արգելքների հանդիպելու։ Ալբանական միութիւնը վրձռել է Բ. Դրան կողմն անցնել, եթէ սկսվի յոյն-թիւրքական պատերազմը։

Հիւանդի միայն տատմն էր ցաւում և ծնօտի մի կողմը փոքր ինչ ուռած էր։ Գաբրիէլը մի այնպիսի զօրաւոր դիր պիտի դրէր, որը կապելով ծնօտի վրա, համ ուռուցքը պիտի խափանվէր, համ էլ տատմի ցաւը պիտի կտրվէր։

Երբ Գաբրիէլը լսեց, որ իրան պալատում կանչում են, վերկացաւ, տանտիրոջը ասելով.

—Երեկոյեան դիրը կը բերեմ, ցաւդ առնեմ, բայց տասերկու հատ ձու պիտի պատրաստ ունենաս, մինչև չը ստանամ չեմ տայ, առանց դրանց չի լինի։ Նա ուշադրութեամբ շարժեց գլխու լիտրան, և նկատելով, որ միջի հեղուկը բոլորովին սպառվել է, դուրս եկաւ գիւղացու խրճթից և սկսեց դիմել դէպի պալատը։

Գաբրիէլի յայտնվելը պալատում շարժեց ընդհանուր ծիծաղ։

—Էլի գլորվում է Գաբրիէլը, նկատեց Արշիլը, նրան հեռուից տեսնելով։

—Եթէ այդ հարիւրը չունենար, նրա հատը ողջ Վրաստանում չէր գտնվի, ասաց մեծ պարոնը.—անիծածը ծովի չափ գիտութիւն ունի։ Ի՞նչ ասես, որ նա չէ կարդացել. սաղմոս, «Ղարամանիանի», մինչև անդամ «Վէրիսիս տրղավօտանի»։ Քանի օր առաջ մի նամակ էի ստացել Աբխազէթից, վանքի բոլոր վարդապետներին կանչել տուի, բոլորն էլ էլի նման կանդնեցին, մընացին. ոչ մէկը կարդալ չը կարողացաւ. հէնց որ Գաբրիէլը առաց ձեռքը, ջրի պէս վազեց։

Գաբրիէլը գլուխ տուեց, և որպէս վայել էր պալատի քարտուղարին, բարձրացաւ, նստեց տախտի վրա։

—Դէ, Գաբրիէլ, գրիչդ ու թանաքամանդ քաշիր, ասաց նրան մեծ պարոնը,—գրելու բան ունես։

Գաբրիէլի պղնձէ թանաքամանը, գօտիի մէջ խրած, միշտ պատրաստ էր։ Նրան ման էր ածում իր հետ քարտուղարը ոչ միայն իբրև ապացոյց իր անհունն գիտութեան. այլ առաւել որպէս նշան այն բարձր պաշտօնի, որ նա վարում էր պալատում։ Նա ունէր ճիշտ այն թանաքամանների ձեւն ու նմանութիւնը, որ մինչև այսօր գործ են ածում Էրզրումի և Վանի կողմերի հայերը։ Նրա երկայն, խողովակաձև փողի մէջ կային եղեղնեայ գրիչներ, գրչահատ և փոքրիկ պղնձէ գդալ մէջը ջուր ածելու համար։ Այդ թանաքամանը, որ գուցէ երկրորդն էր ամբողջ Մըցխէթի մէջ, մեծ պարոնը ընծայ էր ստացել մի տեղից և իր կողմից ընծայել էր քարտուղարին։

Որովհետև ամիսների ընթացքում հաղիւ էր պատահում մի բան գրել, այդ պատճառով Գաբրիէլի թանաքամանը միշտ ցամաք էր լինում։ Այդ հանգամանքը բոլորին ծանօթ լինելով, թամարի խորթ մայրը, առանց խնդրելու, վեր կացաւ և մի ամանով ջուր բերեց, որ նա ածէ թանաքամանի մէջ։ Թէև այդ գործողութեան համար թանաքամանի խողովակի մէջ փոքրիկ գդալ կար, բայց Գաբրիէլը գործը աւելի հեշտացնելու համար ձեռքը կոխեց ջրի ամանի մէջ և բռնեց թանաքամանի վրա. թրջված մատերից ջուրը սկսեց կաթկաթել նրա մէջ։ Այնուհետև թրջված ձեռքը սրբեց իր փարաջայի փէշով։

Թանաքամանը կազմ և պատրաստ էր. մնում էր եղեղնեայ գրիչներից մէկի բթացած ծայրը սրել։ Երբ այդ աշխատութիւնն էլ վերջացաւ, քարտուղարը մի առանձին հպարտութեամբ դարձաւ դէպի ատեանը, ասելով.

—Հիմայ թուղթ տուեցէք, որ գրեմ։

Այդ ամենադժուար խնդիրն էր. թղթի մասին դեռ ոչ ոք չէր մտածել։ Ամբողջ պալատում ման եկան, ամեն տեղ որոնեցին, ոչ մի պատառ թուղթ չը գտան։ Ցետոյ ուղարկեցին վանքը. այնտեղ էլ չը գտնվեցաւ։ Բայց վանահայրը այնքան հնարիմաց էր, որ մեծ պարոնի մարդուն ձեռնունայն յետ չը դարձրեց. նա կըտրեց մի հին գրչագիր գրքի կազմից մի թերթ մագաղաթ և ուղարկեց։

Հրովարտակների գրելու ձեը Գաբրիէլը «հայր մերի» նման անգիր գիտէր. հարկաւոր էր միայն հարցնել անունը, հօր անունը, մնացածը նրան յայտնի էր։ Պատանի Դաւիթին կանչել տուին հօր անունը հարցնելու համար։ Այժմ լուացված, հագնված, զարդարված Դաւիթը այլ ևս առաջվայ հովիւ Դաւիթը չէր։ Նա իր նոր հագուստի մէջ երևում էր մի վայելչահասակ, չնորհալի պատանի, որ իսկոյն իր վրա դարձրեց բոլորի ուշադրութիւնը։

—Քրիստոս վկայ, այդ տղան հէնց մօրից ծնված է թաւաղ լինելու համար, գոչեց Արշիլը ծափահարելով։

Արշիլի ենթադրութիւնը սխալ չէր. Դաւիթը իսկապէս ազնուական ծագումից էր, թէև ինքը չը գիտէր այդ։ Նա տոհմակից էր Սիւնեաց երկրի Օրբելեանների հետ, բայց նրա հայրը աղքատանալով, հասարակ գիւղացիների կարգն էր ընկել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից Վիէննայի «Polit. Corresp.» լրագրին մարտի 14-ից գրում են։ Այստեղի մի քանի դեսպաններին հրահանգ է տրված, ինչպէս լսվում է, Թիւրքիայի ուշադրութիւնը դարձնել Հայաստանի անտանելի դրութեան վրա և յիշեցնել Բ. Դրանը իր յաճախ կրկնված խոստումները այդ նահանգի բարենորոգումների մասին։ Հայոց պատրիարք Ներսէսը հարկաւոր համարեց դիմել մեծ վեզիր Սայիդ-փաշային պաշտօնական խնդիրքով, որի մէջ ցոյց տալով այն անթիւ անարդարութիւնների վրա, որոնց ենթարկվում է Թիւրքիային միշտ հաւատարիմ եղած հայոց ազգը, նա խնդրում է որ այդ անիրաւութիւնների դէմ շուտով միջոցներ գործ դրվեն։ Մինիստրների խորհրդի նախագահը պատասխանեց, որ Հայաստանին վերաբերեալ գլխաւոր գանգատներին շուտով բաւականութիւն կը տրվի։ Հայոց պատրիարքը ինչպէս երևում է այդ պատասխանով այնքան գոհ չէ երևում և այդ պատճառով նա մի նոր խնդիրք է կազմում Սուլթանի անունով, որի մէջ մանրամասն նկարագրելով հայոց ազգի անմխիթար դրութիւնը, իր ամբողջ յոյսը դնում է Սուլթանի արդարադատութեան վրա։

—Լրագիրները հաղորդում են, որ իրանդացիները շատ յուզված վիճելով անգլիական կառավարութեան դէմ, ինչպէս լսվում է, դիտաւորութիւն ունէին ճայթեցնել պարլամենտի ամբողջ շինութիւնը։ Հրամայված է հետազօտել շինութեան ներքնայարկերը։ Նորերումս գտան մի քանի պուդ վառօդ լորդ-մերի ընակարանի ներքնայարկում։

—«Մասիսի» մէջ կարդում ենք։ «Հազիգաթ» լրագիրն յիշելով այն զրոյցը, թէ տերութեանց դեսպաններն հրահանգ ստացած են յառաջիկայ բանակցութեանց ընթացքին մէջ Հայկական խնդրոյն վրա ալ բանակցելու, կըսէ թէ այս իրողութիւնը մեծ յուզմունք պատճառած է Հայաստանի մէջ։ «Հազիգաթ» խրատ կուտայ հայոց թէ իրենց փրկութիւնն օտար միջամտութեան մէջ չը փնտռեն, այլ կայսերական կառավարութեան ներքև իրենց ունեցած կացութենէն գոհ լինին։ «Հազիգաթ» կեզրակացնէ ըսելով որ եթէ օտար միջամտութիւնը լաւ բան մը լինէր, Եգիպտոս ներկայ ցաւալի վիճակին մէջ չէր գտնուէր»։

—Լրագիրները հաղորդում են, որ այս տարվայ յունիս ամսին գումարվելու է Լօնդօնում միջազգային յեղափոխական կօնգրէս։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սարաղբուրգի բողոքական պատօրները խնդիրք են ներկայացրել ըէյխստագին քաղաքական ամուսնութեան պարտադիր օրէնքի պահպանութեան համար, որ Բերլինի յետադէմները և պիէտիստները ցանկանում են վերցնել։ Ի մէջ այլոց խնդիրք ներկայացնողները ցոյց են տալիս պարտադիր քաղաքական ամուսնութեան այն լաւ հետեւանքները հասարակութեան բարոյականութեան վրա, որ ունեցել է այդ օրէնքը Էլզաս-Լոթարինգիայում։

* *
*

Գերմանիայի կանցլերի օրդու—Հերբարտ Բիսմարկի փախուստը իր դեղեցկութեամբ յայտնի, Իշխանուհի Կարոլատ-Բէյնտերի հետ, մեծ աղմուկ է հանել Բերլինում։ Իշխանուհու մարդը, որը Պրուսիայի պալատի անդամ է, խնդիրք է ներկայացրել ապահարզան ստանալու համար։ Հերբարտ Բիսմարկը չը նայելով իր հօր անհամաձայնութեան, դիտաւորութիւն ունի պսակվել փախցրած գեղեցկուհու հետ։

* *
*

Բերլինի նոր սպանդանոցի տեսչութիւնը հետազօտելով ռուսաց տեսակի խոզերի միսը, գտել է այդ մսի մէջ տրիխին անուանած փոքրիկ կենդանիներ։ Այդ կենդանիները մօրթած խոզի մսի մէջ դեռ կենդանի շարժվելիս են եղել։ Գերմանիայում մեծ զգուշութիւններ են գործ դրվում, որ այն անասունի միսը, որի մէջ գտնվում են տրիխին, չը ծախվի։ Սպանդանոցներում խոզերի միսը հետազօտվում է միկրոսկոպով. տրիխինով վարակված կենդանու միսը դէն է գցվում, իսկ մսավաճառին կամ կենդանու տիրոջը այն մսի գինը վճարվում է քաղաքից։ Եթէ այդ փոքրիկ կենդանի տրիխինները կերակուրի հետ մարդու մարմին մտնեն, այլ ևս փրկութիւն չը կայ մարդու համար։ Մարդ վարակվելով այդ տրիխիններով սաստիկ տանջանքների մէջ մեռնում է։

* *
*

Այժմ Փարիզի սալօններում մի նկարիչ, կամ աւելի լաւ է ասել ձեռնածու Սան-Կարլօ անունով, հասարակութեան առաջ տաս բօպէում վերջացնում է ձիթանկար մի մէտր երկայնութեամբ և լայնութեամբ, իսկ չորս բօպէում նկարում է պատկեր մատիտով մէկ թերթ թղթի մեծութեամբ։ «Ֆիգարօյի» խմբագրութեան մէջ նա նկարեց նոյն ժամանակամիջոցում մի տեսարան մատիտով և մի ձիթանկար։ Սան-Կարլօ իտալացի է Միլանօ քաղաքից, իսկ նկարչութեան արուեստը նա սովորել է Վիէննայի ակադեմիայում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մարտի։ Երէկ կատարվեցաւ ի Տէր Հանգուցեալ Կայսրի թաղման հանդէսը։ Այդ օրը ամբողջ Ռուսաստանի մէջ հոգեհանգիստ էր կատարվում։ Ամեն տեղ ցաւ և ողբ էր տիրում։ Պալատական սուգը մի տարի կը լինի։ Ռումինական իշխանութիւնը թագաւորութիւն է յայտնված։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 12 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 75 կ., երկրորդ 217 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 23 կ., երկրորդ 92 ր. 12 կ., երրորդ 92 ր. 24 կ., ոսկի 7 ր. 95 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,87 պէնս, ռուսաց 100 ր. Փարիզի վրա արժէ 262 ֆրանկ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Քարտուղարը մագաղաթի թերթը դրեց մի կտոր տախտակի վրա, և տախտակը դնելով իր ծնկի վրա, այսպիսով կազմվեցաւ նրա գրասեղանը։ Սկսեց գրել։ Որքան և վարժ էր նա գրելու մէջ, այսուամենայնիւ, մի քանի ժամ տեւեց, մինչև աւարտեց իր գործը։ Երբ բոլորովին պատրաստ էր, սկսեց կարդալ, մի և նոյն ձայնով, մի և նոյն եղանակով, որպէս կարդում էր նա եկեղեցում Աւետարանը։ Ցետոյ մագաղաթի թերթը իր թանաքամանի հետ դրեց մեծ պարոնի առջև։ Մնում էր կնքել նրան։ Մեծ պարոնը մատը թաթախեց թանաքամանի մէջ, նըրանով մրոտեց իր մեծ, քառանկիւնի կնիքը, որ մի թելով միշտ կախ տուած ունէր գօտիից, և կնքեց հրովարտակի ճակատը։ Նրանից յետոյ ինքը քարտուղարը, Արշիլը, Լևանը, Զաքարա և Ալէքսի թաւաղի որդիները,—Վրաստանի այդ հինգ առաջնակարգ պետական մարդիկը,—վաւերացրին իշխանական հրովարտակը իրանց կնիքներով։

—Եկ, զաւակս, ասաց մեծ պարոնը, դառնալով դէպի պատանին և մագաղաթի թերթը մեկնելով նրան.—բարով վայելես։

Դաւիթը մօտեցաւ, չոքեց մեծ պարոնի առջև, և նրա հագուստի դրօշակը համբուրելով, ընդունեց հրովարտակը։

(Կը շարունակուի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. հիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Սի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին դլխաչափ դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

34—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Համեմատեցէք Թէյի Փունտը			1 ր. 5 կ.	Մոսկվայից բերվող Թէյի հետ			Ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	Ֆ. 3 ր.

58—100

ԵՐԿՈՒ ԽԱՆՈՒԹՆԵՐ ՄԱՌԱՆՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ տրվում 1881 թ. մայսի 1ից Աստամանկայա (Պոչտովայա) փողոցի վրա սեմինարիայի դիմացը **Ն. Ե. ԶՈՒԲԱԼՕՎԻ** տանը, № 6. Պայմանների մասին կարելի է տեղեկանալ նոյն տեղը „Բոսիկայա" ընկերութեան գրասենեակի մէջ, կառավարչի մօտ։

2—4

Ստեփան **ԵՐԱՄԵԱՆՑ** ունի պատիւ յայտնելու որ նա ընդունում է **ՎԻԷՆՆԱՅՈՒՄ** կատարելու ամեն տեսակ առևտրական և այլ **ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**։

Հասցէն։ ВѢНА (Австрія) St. Jeramjanz, Hôtel Schröder. WIEN, II.

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է „Կենտրոնական" ու „Կովկասեան" գրավաճառանոցներում **ՄՕԼԻԷՐԻ „ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՐԱՏ"**, ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ։ Գինն է 30 կ.։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ծախվում են հազի դէմ **ԿՕՆՖԵԿՏՆԵՐ** 40 կ. Ֆունտը, խինայի գինի ջերմի դէմ 1 ր. 50 կ. շիշը, պարսկական **ՇԵՐԲԵՏ**, ցիտրադ մագնեզիայի ծարաւի դէմ 70 կ., ամենալաւ **ԿՕՆԵԱԿ** 2 ր., հին **ՊՕՐՏ-ՎԷՅՆ ԵՒ** խերես 1 ր. 40 կ., **ՄԵՂՐԱՄՕՄ** և չոր **ՍԱՊՕՆ** և այլն։

4—15

ԼՈՏ 11

դաստ դոհոտիդ ‹ճանափ վշվմ ։Հողոտվդիդ տդչ մվ դվմդղնեճոհդոճ հ յրոսդոանդ ոդհ դղնդ ։Հողոտտ մդդմդոտտոհ հ յրոսդդրոկ ‹մդդոտդթդր դոհդչդչ **ԷՏՍվ դ ԷՏՄՈ** վդոս մս ‹**ԻՍՎՎՈՈՂ ՎՆՎՈՈԻ**

3—5

ՍԵՐՄԵՐ պարտիզի բոյսերի և **ԾԱՂԻԿՆԵՐԻ** բոլորովին **ԹԱՐՄ** ստացված են Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան գործակատարի խանութի մէջ։ Գօլովինսկայա փողոց № 11. **ԼԱՐՇԵԻ** խանութ։ Սերմերի ցուցակները ձրի են տրվում։

7—10

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Թիֆլիսի հայ գրավաճառների մօտ Կ. Կոստանեանցի „Գրաբառ բայերի ԽՈՆԱՐՀՈՒՄԸ մի աղիւսակի մէջ, գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար"։ Գինը՝ հատով՝ 25 կոպ., դուզնով՝ 20 կ.։

Այս գրքոյկը պարունակելով իւր մէջ բայերի մի պարզ նախադիտելիք, յանգերի, օրինակների և խոնարհմանց ամփոփ աղիւսակներ՝ շատ հեշտացնում է աշակերտաց գրաբառ բայերի ուսումը։ Ի նկատի ունենալով գործի օգտակարութիւնը և գնի թեթևութիւնը համարձակ կարելի է խորհուրդ տալ գրաբառ ուսանող աշակերտաց ձեռք բերելու յիշեալ երկասիրութիւնը։

Նոյն հեղինակի „Հիւսուածք հայ պատմագրաց", 3 հատոր (3 ր.) և „Հայոց հեթանոսական կրօնը (30 կ) կարելի է նոյնպէս Թիֆլիսի գրավաճառներից կամ ուղղակի հեղինակից ստանալ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐԻ, մատուցարանների, կողպէքների, գրիչների, թղթի, հրացանների, ատրճանակների, բաժակների, ցիտրատ-մագնեզիայի, կոնֆէկտների, մուրաբայի և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ**։

Նոյն տեղը **ԾԱԽՎՈՒՄ ԵՆ** պալասներ 12 ռուբլուց, բրիւկներ 4 ռուբլուց, տրիկօ արշինը 70 կոպէկից, տարելկաներ 12 ռուբլուց հատը, կեախտինեան թէյ գարնանը հաւաքած ուղղակի պլանտատորներից 1 ր. 10 կոպէկից մինչև (ամենալաւը) Ֆունտը 2 ռուբլի առանց թղթի, մակինտոշներ 8 ռուբլուց, և մուրաբայի մէկ վագոնը 85 կոպէկով։

11—12

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ գործարանական գներով **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ **ԱՐԾՐՈՒՆՈՒ** գալերէյում։ Նոյն տեղը ծախվում են անգլիական ֆիլտրաներ, մանանեխ, օսլայ (կրախմալ), կակաօ, շօկօլադ, բաժակներ և դէմքը զեղեցկացնելու համար ծրծմբէ, կաթնի, նուշի և զլիցերինի իւղ։ Հրացաններ նոր ձևի։

4—12

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների։

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Զը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվին. **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական ըէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆԱԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջօնսօնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, տուրնօրի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաշօկօլադի ծախելու համար, որոնք Փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կօնֆեկտներ հազի դէմ 60 կ. Ֆունտը։

43—100

Մամուլի տակից դուրս եկան և վաճառվում են կենտրոնական գրավաճառանոցում հետևեալ գրքերը. Հենչէլի բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ, ծխական դպրոցների համար. փոխադրեց Ս. Մանդինեան 1-ն և 2-րդ տարի. Թիֆլիս 1881 գ. 40 կ.

Գրաբար բայերի խոնարհումը մի աղիւսակի մէջ. գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար. յօրինեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, գ. 25 կ.

Նոյն տեղը վաճառվում են հետևեալ գրքերը.

Սիրաք և Սամուէլ։ Բարի հօր կրթական դասեր։ Գրեց Խրիմեան Հայրիկ Կ. Պօլիս գ. 1 ր. 25 կ.

Լ. Զէսարֆիլովի խրատ առ որդին իւր. Վենետիկ գ. 75 կ.

Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ Գ. Վ. Սրուանձտեանց Կ. Պոլիս գ. 1 ր. 25 կ.

Թուղթ Մարկոսի Աղաբէգեանց։ Հայոց աշխարհի, ազգի և եկեղեցու ազգայնութեան մասին առ պատուականաց պատուական ՏԷր Ներսէս պատրիարք Հայոց Կ. Պոլիս գ. 2 ր. 25 կ.

Պարոնեան, Ազգային ջոջեր 3 հատոր, Կ. Պոլիս գ. 3 ր. 5 կ.

Մանանայ։ Ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց Կ. Պոլիս գ. 1 ր. 75 կ.

Տարերք իմաստասիրութեան ընդարձակ Ի. Հ. Աւք. Վ. Գուրգենեան 5 հ. Կ. Պոլիս գ. 3 ր. 50 կ.

Խորհրդական բերդը։ Վիպասանութիւն Ֆօժէր օր. Գաղիացւոյ, Վենետիկ գ. 1 ր.

Լճակիս ձկնորսը, յօրինեց Հ. Յ. Վ. Խաչերտեանց։ Վենետիկ գ. 1 ր.

Միանարեանց. Փնար Հայկական Ս. Պ. Բ. գ. 1 ր. 30 կ.

Մուզայք Հայաստանի։ Նոր երգարան Թիֆլիս գ. 50 կ.

Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ. աշխ. Գ. Երեցփոխեանց Թիֆլիս գ. 4 ր.

Օտարաքաղաքացիք ճանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր ր. համար 10 կ. պատուէրները պէտք է ուղարկվեն այս հասցէով „Въ Тифлисъ, въ Центральную Книжную торговлю".

ԱԼԻՅԵԼԵԱՆ ԷՏԱՄԻ ԲԺՇԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԷՏԱՄՆԵՐՈՑԺ ԲԺԻՇԿ Լ. Ի. ԷԴԵԼՀԷՅՄԻ թոյլ են տուած **Մոսկվայի ԲԺՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻՑ**։ Այդ միջոցները մեծ **ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՆ** գտել և առաջարկվում են իբրև **ԱՄԵՆԱԼԱՒ** առողջապահական **ՄԻՋՈՑՆԵՐ** բերանի և ատամների համար։ Կարելի է **ԷՏԱՄՆԵՐԸ** պահպանել **ՓՕՇԻՆԱԼՈՒՑ**, սառեցնում են **ԼՕՐՁՈՒՆԲԻ ՋԵՐԸ** և վատ **ՀՈՏԻ** առաջն են առնում։

Ատամնաբոյժ բժիշկ Ա. Ի. Աղելհէյմի **ԳԻԼԽԵՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ** գտնվում է **ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒԶՆԵՑԿԻ ԿԱՄՈՒՐՋ, ՍՕԿՕԼՕՎԻ** տանը։

ԹԻՖԻՍՈՒՄ կարելի է գտնել **Ա. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ ԿՈՎԿԱՍԱՆ** և անդրկովկասեան գլխաւոր **ՊԱՀԵՍՏՈՒՄ**։ Ծախողների **ՆՀԱՆԱԻՈՐ ՋԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ**։

22—30 (11)

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով։ Այդտեղ կայ սովորաբար 50,000 Ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաօ և շօկօլադ-Ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թասքեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտոշներ, կալենկոր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։ Արծրունու գալերէում։

100—66

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Марта 1881 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.